ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«2» փետրվարի 2023 թվականի N 100-Ա

## ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ՈՐՊԵՍ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՊԱՐԻՍՊԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել քաղաքացիներ Արթուր Ռազմիկի Սաֆարյանի (ծնված՝ 1981 թվականի մարտի 24-ին), Դավիթ Ռազմիկի Սաֆարյանի (ծնված՝ 1977 թվականի հուլիսի 8-ին) և Նարեկ Ռազմիկի Սաֆարյանի (ծնված՝ 1992 թվականի հունվարի 22-ին) Ջրվեժի համայնքապետարանին հասցեագրված դիմումը, որով ցանկություն են հայտնել օրինականացնելու ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով իրենց պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 2-րդ այգեգործական զանգվածի 5-րդ թաղամասի թիվ 7 և թիվ 8-10 հասցեների հողամասերի միջնամասում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 71,2 քառ.մետր մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասը և հողամասում իրենց կողմից ինքնակամ կառուցված շինությունը՝ պարիսպը (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 06072021-07-0129 վկայական, տրված 2021 թվականի հուլիսի 6-ին և թիվ 06092018-07-0056 վկայական, տրված 2018 թվականի սեպտեմբերի 6-ին, «ԳԻՍ-ԱՐՏ» ՍՊԸ-ի կողմից 2022 թվականի դեկտեմբերի 1-ին կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագիծը, ինքնակամ կառույցը Կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հավաստող ծածկագիր՝ 2022SLFM53, մուտքագրված 2022 թվականի դեկտեմբերի 2-ին):

Համաձայն համայնքի կադաստրային քարտեզի և «ԳԻՍ-ԱՐՏ» ՍՊԸ-ի կողմից կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագծի՝ պարզվել է, որ Արթուր, Դավիթ և Նարեկ Ռազմիկի Սաֆարյանները ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով իրենց պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 2-րդ այգեգործական զանգվածի 5-րդ թաղամասի թիվ 7 և թիվ 8-10 հասցեների հողամասերի միջնամասում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 71,2 քառ.մետր մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասում ինքնակամ կառուցել է պարիսպ՝ 0,08 քառ.մետր արտաքին մակերեսով (հիմք՝ Կադաստրի կոմիտեում հաշվառման ծածկագիրը՝ 2022SLFM53):

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 731-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետով և N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 33, 34-րդ կետերով, 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 31-րդ և 50-րդ կետերով, և հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 2-րդ այգեգործական զանգվածի 5-րդ թաղամասի թիվ 7 և թիվ 8-10 հասցեների հողամասերի միջնամասում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 71,2 քառ.մետր մակերեսով բնակավայրի բնակելի կառուցապատման հողակտորում ինքնակամ կառուցված 0,08 քառ.մետր արտաքին մակերեսվ պարիսպի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, նկատի ունենալով, որ ինքնակամ շինությունը կառուցված չէ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման ու անվտանգության գոտիներում և քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ***որոշում եմ.***

1.Ջրվեժ համայնքի Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 2-րդ այգեգործական զանգվածի 5-րդ թաղամասի թիվ 7 և թիվ 8-10 հասցեների հողամասերի միջնամասում գտնվող 71,2 քառ.մետր մակերեսով համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի բնակելի կառուցապատման հողակտորին տրամադրել հասցե՝ համայնք Ջրվեժ, գյուղ Ջրվեժ, 2-րդ այգեգործական զանգված, 5-րդ թաղամաս, թիվ 7/1:

2.Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 2-րդ այգեգործական զանգվածի 5-րդ թաղամասի թիվ 7/1 հասցեի համայնքային սեփականություն հանդիսացող 71,2 քառ.մետր մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողակտորում ինքնակամ կառուցված 0,08 քառ.մետր արտաքին մակերեսով պարիսպը համարել օրինական և ճանաչել համայնքային սեփականության իրավունքը (կցվում են հողամասի և շինության հատակագծերը):

3.Դիմել Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում՝ Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 2-րդ այգեգործական զանգվածի 5-րդ թաղամասի թիվ 7/1 հասցեում գտնվող գույքի նկատմամբ համայնքային սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:

4.Կառույցի նկատմամբ իրավունքների պետական գրանցումից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում կառույցը ձեռք բերելու նպատակով գրավոր առաջարկություն ներկայացնել կառույցն իրականացրած անձանց:

5.Որոշման կատարումը հանձնարարել համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Նորայր Սանթրոսյանին:

6.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Սուսաննա Թադևոսյանը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2023 թ. փետրվարի 2

գ.Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«1» փետրվարի 2023 թվականի N 99-Ա

## ՀՈՂԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել «ԿՐԵԴՈ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի տնօրեն Կարեն Վահանի Միսակյանի Ջրվեժի համայնքապետարանին հասցեագրված դիմումը, որով ցանկություն է հայտնել սեփականության իրավունքով «ԿՐԵԴՈ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի 07-042-0323-0039 կադաստրային համարի 2031,7 քառ.մետր մակերեսով գյուղատնտեսական նշանակության վարելահողի նպատակային նշանակությունը փոխադրելու բնակավայրի բնակելի կառուցապատման հողերի կատեգորիա՝ օրենսդրությամբ սահմանված կարգով բնակելի կառուցապատում իրականացնելու համար (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 29092022-07-0087, տրված 2022 թվականի սեպտեմբերի 29-ին):

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետի, «Քաղաքաշինության մասին» օրենքի $14^3$-րդ հոդվածի 12-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 25-րդ կետի, 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50 և 53-րդ կետերի, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքի 7-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ավագանու 2023 թվականի հունվարի 16-ի թիվ 8-Ա որոշումը, ***որոշում եմ.***

1.«ԿՐԵԴՈ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի 07-042-0323-0039 կադաստրային համարի 2031,7 քառ.մետր մակերեսով հողամասի նշանակությունը փոխադրել բնակավայրի բնակելի կառուցապատման հողերի կատեգորիա՝ օրենսդրությամբ սահմանված կարգով բնակելի կառուցապատման համար:

2.«ԿՐԵԴՈ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի 07-042-0323-0039 կադաստրային համարի 2031,7 քառ.մետր մակերեսով բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասին տրամադրել հասցե՝ համայնք Ջրվեժ, գյուղ Ձորաղբյուր, Սևանի փողոց փողոց, 1-ին նրբանցք, թիվ 5:

3.Առաջարկել «ԿՐԵԴՈ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի տնօրեն Կարեն Վահանի Միսակյանին՝ Ջրվեժ համայնքի բյուջեի 900105221171 հաշվին վճարելու հողամասի նպատակային նշանակության փոփոխման պահին առկա կադաստրային արժեքների տարբերությունը՝ 8 945 169 (ութ միլիոն ինը հարյուր քառասունհինգ հազար հարյուր վաթսունինը) Հայաստանի Հանրապետության դրամ:

4.Կառուցապատման հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀՇՆ 30-01-2014 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:

5.Կառուցվող շենքերի և շինությունների սպասարկման համար անհրաժեշտ ենթակառուցվածքների իրականացումը կատարվում են բացառապես կառուցապատողի միջոցների հաշվին:

6.Աշխատակազմի գլխավոր մասնագետ Հուսիկ Գրիգորյանին՝

1)իրականացնել հսկողություն սույն որոշման երրորդ կետի նկատմամբ,

2)սույն որոշման առաջին կետում նշված հողի նպատակային նշանակության փոփոխությունը պետական գրանցում ստանալուց հետո ընդգրկել համայնքի տարեկան, ընթացիկ հաշվառման և համայնքի հողային հաշվեկշռում:

7.Աշխատակազմի քարտուղարին՝ հողամասի նպատակային նշանակության կատարված փոփոխության մասին 10-օրյա ժամկետում տեղեկացնել քաղաքաշինության կոմիտե և անշարժ գույքի նկատմամբ իրավունքները գրանցող պետական մարմին:

8.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ «ԿՐԵԴՈ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի տնօրեն Կարեն Վահանի Միսակյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2023 թ. փետրվարի 1

գ.Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«1» փետրվարի 2023 թվականի N 98-Ա

## ՀՈՂԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Արա Յուրիկի Սահակյանի լիազոր ներկայացուցիչ Մանվել Համլետի Դալլաքյանի Ջրվեժի համայնքապետարանին հասցեագրված դիմումը, որով ցանկություն է հայտնել սեփականության իրավունքով Արա Սահակյանին պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի 07-042-0338-0091 կադաստրային համարի 1700,0 քառ.մետր մակերեսով գյուղատնտեսական նշանակության վարելահողից 600,0 քառ.մետր մակերեսով հատվածի նպատակային նշանակությունը փոխադրելու բնակավայրի բնակելի կառուցապատման հողերի կատեգորիա՝ օրենսդրությամբ սահմանված կարգով բնակելի կառուցապատում իրականացնելու համար (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 01102020-07-0056, տրված 2020 թվականի հոկտեմբերի 1-ին):

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետի, «Քաղաքաշինության մասին» օրենքի $14^{3}$-րդ հոդվածի 12-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 25-րդ կետի, 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50 և 53-րդ կետերի, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքի 7-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ավագանու 2023 թվականի հունվարի 16-ի թիվ 6-Ա որոշումը, ***որոշում եմ.***

1.Արա Յուրիկի Սահակյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի 07-042-0338-0091 կադաստրային համարի 1700,0 քառ.մետր մակերեսով գյուղատնտեսական նշանակության վարելահողից 600,0 քառ.մետր մակերեսով հատվածի նպատակային նշանակությունը փոխադրել բնակավայրի բնակելի կառուցապատման հողերի կատեգորիա՝ օրենսդրությամբ սահմանված կարգով բնակելի կառուցապատման համար:

2.Արա Յուրիկի Սահակյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի 07-042-0338-0091 կադաստրային համարի 1700,0 քառ.մետր մակերեսով գյուղատնտեսական նշանակության վարելահողից 600,0 քառ.մետր մակերեսով բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասին տրամադրել հասցե՝ համայնք Ջրվեժ, գյուղ Ձորաղբյուր, թիվ 15:

3.Առաջարկել Արա Յուրիկի Սահակյանին՝ Ջրվեժ համայնքի բյուջեի 900105221171 հաշվին վճարելու հողամասի նպատակային նշանակության փոփոխման պահին առկա կադաստրային արժեքների տարբերությունը՝ 2 593 980 (երկու միլիոն հինգ հարյուր իննսուներեք հազար ինը հարյուր ութսուն) Հայաստանի Հանրապետության դրամ:

4.Կառուցապատման հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀՇՆ 30-01-2014 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:

5.Կառուցվող շենքերի և շինությունների սպասարկման համար անհրաժեշտ ենթակառուցվածների իրականացումը կատարվում են բացառապես կառուցապատողի միջոցների հաշվին:

6.Աշխատակազմի գլխավոր մասնագետ Հուսիկ Գրիգորյանին՝

1)իրականացնել հսկողություն սույն որոշման երրորդ կետի նկատմամբ,

2)սույն որոշման առաջին կետում նշված հողի նպատակային նշանակության փոփոխությունը պետական գրանցում ստանալուց հետո ընդգրկել համայնքի տարեկան, ընթացիկ հաշվառման և համայնքի հողային հաշվեկշռում:

7.Աշխատակազմի քարտուղարին՝ հողամասի նպատակային նշանակության կատարված փոփոխության մասին 10-օրյա ժամկետում տեղեկացնել քաղաքաշինության կոմիտե և անշարժ գույքի նկատմամբ իրավունքները գրանցող պետական մարմին:

8.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Արա Յուրիկի Սահակյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2023 թ. փետրվարի 1
գ.Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«1» փետրվարի 2023 թվականի N 97-Ա

## ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով, ***որոշում եմ.***

1.Նունե Մարտիկի Եսայանին տալ այգետնակի վերակառուցումը առանձնատան շինարարության թույլտվություն՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի այգեգործական զանգվածի 5-րդ թաղամասի թիվ 11 հասցեի հողամասում:

2.Կառուցվող շենքերի և շինությունների սպասարկման համար անհրաժեշտ ենթակառուցվածների իրականացումը կատարվում են բացառապես կառուցապատողի միջոցների հաշվին:

3.Պարտավորեցնել Նունե Մարտիկի Եսայանին շինարարական աշխատանքներն սկսելուց առնվազն երեք օր առաջ, տեղեկացնել համայնքի ղեկավարին, համաձայն N 2-5 ձևի:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Նունե Մարտիկի Եսայանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2023 թ. փետրվարի 1
գ. Ջրվեժ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
# ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«1» փետրվարի 2023 թվականի N 96-Ա

### ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով, ***որոշում եմ.***

1.Վահե և Բելլա Ադոնյանս Սալմաններին տալ թվով երկու երկհարկանի առանձնատների՝ որից մեկը կիսանկուղային հարկով, լողավազանի, ծածկի և պարիսպի կառուցման շինարարության թույլտվություն՝ ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով իրենց պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 50-րդ փողոցի թիվ 3 հասցեի հողամասում:

2.Կառուցվող շենքերի և շինությունների սպասարկման համար անհրաժեշտ ենթակառուցվածների իրականացումը կատարվում են բացառապես կառուցապատողի միջոցների հաշվին:

3.Պարտավորեցնել Վահե և Բելլա Ադոնյանս Սալմաններին շինարարական աշխատանքներն սկսելուց առնվազն երեք օր առաջ, տեղեկացնել համայնքի ղեկավարին, համաձայն N 2-5 ձևի:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Վահե և Բելլա Ադոնյանս Սալմաններին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2023 թ. փետրվարի 1
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«31» հունվարի 2023 թվականի N 95-Ա

## ԿԱՐԻՆԵ ԲԱՐՍԵՂԻ ԲԱՐՍԵՂՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՅՑ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 48-րդ հոդվածի պահանջներով, հիմք ընդունելով համայնքի ավագանու 2019 թվականի հունվարի 15-ի թիվ 4-Ն որոշմամբ հաստատված չափորոշիչները, Ջրվեժ համայնքի սոցիալական խնդիրների ուսումնասիրման հանձնաժողովի եզրակացությունը Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 6-րդ փողոցի թիվ 64/1 տան բնակիչ Կարինե Բարսեղի Բարսեղյանի ընտանիքի վերաբերյալ, այն է՝ Կարինե Բարսեղի Բարսեղյանը ներկայումս բնակվում է ընտանիքի մեկ անձով, ինքը հանդիսանում է 2-րդ կարգի հաշմանդամության թոշակառու, ունի առողջական խնդիրներ, գտնվում է բժիշկների մշտական հսկողության տակ և իր սոցիալական վիճակից ելնելով Կարինե Բարսեղի Բարսեղյանը դիմել է համայնքապետարան՝ դրամական օգնություն ստանալու խնդրանքով, ***որոշում եմ.***

1.Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի պետ Սոնա Հովհաննիսյանին՝ բյուջեի համապատասխան հոդվածից Կարինե Բարսեղի Բարսեղյանի ընտանիքին ցույց տալ դրամական օգնություն՝ 30 000 (երեսուն հազար) դրամ գումարի չափով:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Կարինե Բարսեղի Բարսեղյանի ընտանիքին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2023 թ. հունվարի 31
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«31» հունվարի 2023 թվականի N 94-Ա

## ՎԱԼԵՐԻԿ ԳԵՎՈՐԳԻ ՀՈՂՄՐՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՅՑ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 48-րդ հոդվածի պահանջներով, հիմք ընդունելով համայնքի ավագանու 2019 թվականի հունվարի 15-ի թիվ 4-Ն որոշմամբ հաստատված չափորոշիչները, Ջրվեժ համայնքի սոցիալական խնդիրների ուսումնասիրման հանձնաժողովի եզրակացությունը Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի Մելքոնյան փողոցի 2-րդ փակուղու թիվ 17 տան բնակիչ Վալերիկ Գևորգի Հողմրցյանի ընտանիքի վերաբերյալ, այն է՝ Վալերիկ Գևորգի Հողմրցյանը ներկայումս բնակվում է ընտանիքի 4 անձով ծնողներին պատկանող տանը, ունի առողջական խնդիրներ և չի աշխատում, կինը՝ Նաիրա Մանուկի Մանուկյանը, աշխատում է կապի բաժանմունքում, ունի ցածր եկամուտ, որդին՝ Էդգար Վալերիկի Հողմրցյանը՝ ծնված 2002 թվականին, վերջերս է վերադարձել զինվորական ծառայությունից, ուսանող է, մայրը՝ Նազելի Գրիգորի Ավետյանը, ծնված՝ 1940 թվականին, կենսաթոշակառու է, ունի առողջական խնդիրներ և ընտանիքի ֆինանսական և սոցիալական վիճակից ելնելով Վալերիկ Գևորգի Հողմրցյանը դիմել է համայնքապետարան՝ ֆինանսական օգնություն ստանալու խնդրանքով, ***որոշում եմ.***

1.Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնին՝ բյուջեի համապատասխան հոդվածից Վալերիկ Գևորգի Հողմրցյանին ցույց տալ ֆինանսական օգնություն՝ 30 000 (երեսուն հազար) դրամ գումարի չափով:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Վալերիկ Գևորգի Հողմրցյանի ընտանիքին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2023 թ. հունվարի 31
գ. Ջրվեժ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«31» հունվարի 2023 թվականի N 93-Ա

### ՎԱՀԱՆ ՀՐԱՉԻԿԻ ԱՌԱՔԵԼՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՅՑ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 48-րդ հոդվածի պահանջներով, հիմք ընդունելով համայնքի ավագանու 2019 թվականի հունվարի 15-ի թիվ 4-Ն որոշմամբ հաստատված չափորոշիչները, Ջրվեժ համայնքի սոցիալական խնդիրների ուսումնասիրման հանձնաժողովի եզրակացությունը Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 5-րդ փողոցի թիվ 52 տան բնակիչ Վահան Հրաչիկի Առաքելյանի ընտանիքի վերաբերյալ, այն է՝ Վահան Հրաչիկի Առաքելյանը ներկայումս բնակվում է ընտանիքի 5 անձով, մայրը՝ Սիրանուշ Սերոբի Մուրադյանը, մահացել է 2023 թվականի հունվարի 13-ին, ինքը և կինը՝ Համիկ Ֆոլիկի Մարգարյանը չեն աշխատում, նրանց խնամքի տակ է անչափահաս աղջիկը՝ Սիրանուշ Վահանի առաքելյանը՝ ծնված 2005 թվականին և որդին՝ Հրաչիկ Վահանի Առաքելյանը՝ ծնված 2003 թվականին, նրանց հետ է բնակվում հայրը՝ Հրաչիկ Արամի Առաքելյանը, որն անկողնային հիվանդ է և ընտանիքի ֆինանսական վիճակից ելնելով Վահան Հրաչիկի Առաքելյանը դիմել է համայնքապետարան՝ ֆինանսական օգնություն ստանալու խնդրանքով, ***որոշում եմ.***

1.Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնին՝ բյուջեի համապատասխան հոդվածից Վահան Հրաչիկի Առաքելյանին ցույց տալ ֆինանսական օգնություն՝ 30 000 (երեսուն հազար) դրամ գումարի չափով:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Վահան Հրաչիկի Առաքելյանի ընտանիքին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2023 թ. հունվարի 31
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«31» հունվարի 2023 թվականի N 92-Ա

## ՀՈՂԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Անդրանիկ Արմենի Ամիրջանյանի Ջրվեժի համայնքապետարանին հասցեագրված դիմումը, որով ցանկություն է հայտնել սեփականության իրավունքով իրեն պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 07–057–0317–0086 կադաստրային համարի 500,0 քառ.մետր մակերեսով գյուղատնտեսական նշանակության վարելահողը փոխադրելու բնակավայրերի բնակելի կառուցապատման հողերի կատեգորիա (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 27122022-07-0173 վկայական, տրված 2022 թվականի դեկտեմբերի 27-ին):

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետի, «Քաղաքաշինության մասին» օրենքի $14^3$-րդ հոդվածի 12-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 25-րդ կետի, 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50 և 53-րդ կետերի, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքի 7-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ավագանու 2014 թվականի ապրիլի 11-ի թիվ 14-Ն որոշումը, ***որոշում եմ.***

1.Անդրանիկ Արմենի Ամիրջանյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 07–057–0317–0086 կադաստրային համարի 500,0 քառ.մետր մակերեսով գյուղատնտեսական վարելահողը փոխադրել բնակավայրերի բնակելի կառուցապատման հողերի կատեգորիա՝ բնակելի կառուցապատում իրականացնելու նպատակով:

2.Անդրանիկ Արմենի Ամիրջանյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 07–057–0317–0086 կադաստրային համարի 500,0 քառ.մետր մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասին տրամադրել հասցե՝ համայնք Ջրվեժ, գյուղ Ջրվեժ, 56-րդ փողոց, թիվ 10:

3.Առաջարկել Անդրանիկ Արմենի Ամիրջանյանին՝ Ջրվեժ համայնքի բյուջեի 900105228176 հաշվին վճարելու հողամասի նպատակային նշանակության փոփոխման պահին առկա կադաստրային արժեքների տարբերությունը՝ 5 244 650 (հինգ միլիոն երկու հարյուր քառասունչորս հազար վեց հարյուր հիսուն) Հայաստանի Հանրապետության դրամ:

4.Կառուցապատման հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀՇՆ 30-01-2014 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:

5.Կառուցվող շենքերի և շինությունների սպասարկման համար անհրաժեշտ ենթակառուցվածների իրականացումը կատարվում են բացառապես կառուցապատողի միջոցների հաշվին:

6.Աշխատակազմի գլխավոր մասնագետ Հուսիկ Գրիգորյանին՝

1)իրականացնել հսկողություն սույն որոշման երրորդ կետի նկատմամբ,

2)սույն որոշման առաջին կետում նշված հողի նպատակային նշանակության փոփոխությունը պետական գրանցում ստանալուց հետո ընդգրկել համայնքի տարեկան, ընթացիկ հաշվառման և համայնքի հողային հաշվեկշռում:

7.Աշխատակազմի քարտուղարին՝ հողամասի նպատակային նշանակության կատարված փոփոխության մասին 10-օրյա ժամկետում տեղեկացնել քաղաքաշինության կոմիտե և անշարժ գույքի նկատմամբ իրավունքները գրանցող պետական մարմին:

8.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Անդրանիկ Արմենի Ամիրջանյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2023 թ. հունվարի 31
գ.Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

# **Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

«30» հունվարի 2023 թվականի N 91-Ա

## ՀՈՂԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Իշխան Գուրգենի Արզումանյանի Ջրվեժի համայնքապետարանին հասցեագրված դիմումը, որով ցանկություն է հայտնել սեփականության իրավունքով իրեն պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի 07-042-0356-0067 կադաստրային համարի 500,0 քառ.մետր մակերեսով գյուղատնտեսական նշանակության վարելահողի նպատակային նշանակությունը փոխադրելու բնակավայրի բնակելի կառուցապատման հողերի կատեգորիա՝ օրենսդրությամբ սահմանված կարգով բնակելի կառուցապատում իրականացնելու համար (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 28032022-07-0082, տրված 2022 թվականի մարտի 28-ին):

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետի, «Քաղաքաշինության մասին» օրենքի $14^3$-րդ հոդվածի 12-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 25-րդ կետի, 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50 և 53-րդ կետերի, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքի 7-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 110-Ա որոշումը, ***որոշում եմ.***

1.Իշխան Գուրգենի Արզումանյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի 07-042-0356-0067 կադաստրային համարի 500,0 քառ.մետր մակերեսով հողամասի նշանակությունը փոխադրել բնակավայրի բնակելի կառուցապատման հողերի կատեգորիա՝ օրենսդրությամբ սահմանված կարգով բնակելի կառուցապատման համար:

2.Իշխան Գուրգենի Արզումանյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի 07-042-0356-0067 կադաստրային համարի 500,0 քառ.մետր մակերեսով բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասին տրամադրել հասցե՝ համայնք Ջրվեժ, գյուղ Ձորաղբյուր, թիվ 12:

3.Առաջարկել Իշխան Գուրգենի Արզումանյանին Ջրվեժ համայնքի բյուջեի 900105221171 հաշվին վճարելու հողամասի նպատակային նշանակության փոփոխման պահին առկա կադաստրային արժեքների տարբերությունը՝ 2 208 650 (երկու միլիոն երկու հարյուր ութ հազար վեց հարյուր հիսուն) Հայաստանի Հանրապետության դրամ:

4.Կառուցապատման հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀՇՆ 30-01-2014 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:

5.Կառուցվող շենքերի և շինությունների սպասարկման համար անհրաժեշտ ենթակառուցվածների իրականացումը կատարվում են բացառապես կառուցապատողի միջոցների հաշվին:

6.Աշխատակազմի գլխավոր մասնագետ Հուսիկ Գրիգորյանին՝

1)իրականացնել հսկողություն սույն որոշման երրորդ կետի նկատմամբ,

2)սույն որոշման առաջին կետում նշված հողի նպատակային նշանակության փոփոխությունը պետական գրանցում ստանալուց հետո ընդգրկել համայնքի տարեկան, ընթացիկ հաշվառման և համայնքի հողային հաշվեկշռում:

7.Աշխատակազմի քարտուղարին՝ հողամասի նպատակային նշանակության կատարված փոփոխության մասին 10-օրյա ժամկետում տեղեկացնել քաղաքաշինության կոմիտե և անշարժ գույքի նկատմամբ իրավունքները գրանցող պետական մարմին:

8.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Իշխան Գուրգենի Արզունյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2023 թ. հունվարի 30
գ.Ջրվեժ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«30» հունվարի 2023 թվականի N 90-Ա

### ՀՈՂԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Արթուր Սլավիկի Օհանյանի Ջրվեժի համայնքապետարանին հասցեագրված դիմումը, որով ցանկություն է հայտնել սեփականության իրավունքով իրեն պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի 07-042-0341-0071 կադաստրային համարի 1124,5 քառ.մետր մակերեսով գյուղատնտեսական նշանակության վարելահողի նպատակային նշանակությունը փոխադրելու բնակավայրի բնակելի կառուցապատման հողերի կատեգորիա՝ օրենսդրությամբ սահմանված կարգով բնակելի կառուցապատում իրականացնելու համար (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 19082022-07-0144, տրված 2022 թվականի օգոստոսի 19-ին):

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետի, «Քաղաքաշինության մասին» օրենքի $14^3$-րդ հոդվածի 12-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 25-րդ կետի, 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50 և 53-րդ կետերի, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքի 7-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 111-Ա որոշումը, ***որոշում եմ.***

1.Արթուր Սլավիկի Օհանյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի 07-042-0341-0071 կադաստրային համարի 1124,5 քառ.մետր մակերեսով հողամասի նշանակությունը փոխադրել բնակավայրի բնակելի կառուցապատման հողերի կատեգորիա՝ օրենսդրությամբ սահմանված կարգով բնակելի կառուցապատման համար:

2.Արթուր Սլավիկի Օհանյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի 07-042-0341-0071 կադաստրային համարի 1124,5 քառ.մետր մակերեսով բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասին տրամադրել հասցե՝ համայնք Ջրվեժ, գյուղ Ձորաղբյուր, Ազատության փողոց թիվ 105:

3.Առաջարկել Արթուր Սլավիկի Օհանյանին՝ եռամսյա ժամկետում Ջրվեժ համայնքի բյուջեի 900105221171 հաշվին վճարելու հողամասի նպատակային նշանակության փոփոխման պահին առկա կադաստրային արժեքների տարբերությունը՝ 4 967 254 (չորս միլիոն ինը հարյուր վաթսունյոթ հազար երկու հարյուր հիսունչորս) Հայաստանի Հանրապետության դրամ:

4.Կառուցապատման հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀՇՆ 30-01-2014 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:

5.Կառուցվող շենքերի և շինությունների սպասարկման համար անհրաժեշտ ենթակառուցվածքների իրականացումը կատարվում են բացառապես կառուցապատողի միջոցների հաշվին:

6.Աշխատակազմի գլխավոր մասնագետ Հուսիկ Գրիգորյանին՝

1)իրականացնել հսկողություն սույն որոշման երրորդ կետի նկատմամբ,

2)սույն որոշման առաջին կետում նշված հողի նպատակային նշանակության փոփոխությունը պետական գրանցում ստանալուց հետո ընդգրկել համայնքի տարեկան, ընթացիկ հաշվառման և համայնքի հողային հաշվեկշռում:

7.Աշխատակազմի քարտուղարին՝ հողամասի նպատակային նշանակության կատարված փոփոխության մասին 10-օրյա ժամկետում տեղեկացնել քաղաքաշինության կոմիտե և անշարժ գույքի նկատմամբ իրավունքները գրանցող պետական մարմին:

8.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Արթուր Սլավիկի Օհանյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2023 թ. հունվարի 30

գ.Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«30» հունվարի 2023 թվականի N 89-Ա

## ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 37-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետի, 84-րդ հոդվածի 2-րդ մասի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 4-րդ հոդվածի պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ավագանու 2017 թվականի նոյեմբերի 21-ի N 40-Ն որոշումը, ***որոշում եմ.***

1.Ջրվեժ համայնքի 2023-2027 թվականների հնգամյա զարգացման ծրագրի և 2023 թվականի տարեկան աշխատանքային պլանի նախագծերի վերաբերյալ կազմակերպել հանրային քննարկում:

2.Հաստատել Ջրվեժ համայնքի 2023-2027 թվականների հնգամյա զարգացման ծրագրի և 2023 թվականի տարեկան աշխատանքային պլանի նախագծերի վերաբերյալ կազմակերպվող հանրային քննարկման հրավերը՝ համաձայն հավելվածի:

3.Հանրային քննարկման ընթացքում իրականացվող բաց լսումների անցկացումը հանձնարարել Ջրվեժ համայնքի ղեկավարին կից «Համայնքի զարգացման հնգամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման» խորհրդակցական մարմնի անդամ Անահիտ Մարգարյանին:

4.Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի պետ Սոնա Հովհաննիսյանին՝ համայնքի տեղեկատվական կառավարման համակարգում տեղադրել Ջրվեժ համայնքի 2023-2027 թվականների հնգամյա զարգացման ծրագրի և 2023 թվականի տարեկան աշխատանքային պլանի նախագծերի վերաբերյալ կազմակերպվող հանրային քննարկման հրավերը, ինչպես նաև այն փակցնել համայնքի ղեկավարի, վարչական ղեկավարների նստավայրերում՝ բոլորի համար մատչելի ու տեսանելի տեղերում և այն վայրերում, որոնք մատչելի են համայնքի բնակիչներին՝ առնվազն մեկ տեղ յուրաքանչյուր երեք հարյուր բնակչի համար:

5.Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի պետ Սոնա Հովհաննիսյանի վրա:

6.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Սուսաննա Թադևոսյանը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2023 թ. հունվարի 30
գ. Ջրվեժ

Հավելված
ՀՀ Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի
ղեկավարի 2023 թվականի հունվարի
30-ի թիվ 89-Ա որոշման

# ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՀՐԱՎԵՐ

Սույնով Ջրվեժի համայնքապետարանը հրավիրում է բոլոր շահագրգիռ ֆիզիկական և իրավաբանական անձանց մասնակցելու 2023 թվականի փետրվարի 1-ից մինչև փետրվարի 20-ը ներառյալ կազմակերպվող Ջրվեժ համայնքի 2023-2027 թվականների հնգամյա զարգացման ծրագրի և 2023 թվականի տարեկան աշխատանքային պլանի վերաբերյալ կազմակերպվող հանրային քննարկումներին:

Շահագրգիռ անձինք համայնքի պաշտոնական համացանցային կայքում հրապարակված Ջրվեժ համայնքի 2023-2027 թվականների հնգամյա զարգացման ծրագրի և 2023 թվականի տարեկան աշխատանքային պլանի նախագծերի վերաբերյալ կարող են մինչև 2023 թվականի փետրվարի 20-ը ներառյալ ներկայացնել իրենց առաջարկություններն ու դիտողությունները, որոնք կարող են թողնել համացանցային կայքում (www.jrvezh.am) կամ ուղարկել համապատասխան էլեկտրոնային հասցեով (jrvezh.kotayq@mta.gov.am), ինչպես նաև կարող են գրավոր ներկայացնել Ջրվեժի համայնքապետարան:

Հանրային քննարկումների բաց լսումները տեղի կունենան 2023 թվականի փետրվարի 20-ին ժամը 16:00-ին, Ջրվեժի համայնքապետարանում, հասցեն՝ գյուղ Ջրվեժ, Մելքոնյան փողոց, թիվ 76:

Լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար զանգահարել 010-684-929; 055-73-55-53 հեռախոսահամարներով:

Ջրվեժի համայնքապետարան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
## ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«30» հունվարի 2023 թվականի N 88-Ա

## ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 4-Ի ԹԻՎ 320-Ա ԵՎ ՀՈՒՆԻՍԻ 18-Ի ԹԻՎ 362-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ԵՎ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ և 34-րդ հոդվածի 1-ին մասերի,վ«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգի 108-րդ և 124-րդ կետերի պահանջներով և հաշվի առնելով Գոհար Հրանտի Եղիազարյանի խնդրանքը, ***որոշում եմ.***

1.Համայնքի ղեկավարի 2019 թվականի հունիսի 4-ի «Ճարատարապետահատակագծային առաջադրանք տալու մասին» թիվ 320-Ա և հունիսի 18-ի «Շինարարության թույլտվություն տալու մասին» թիվ 362-Ա որոշումներում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշման 1-ին կետում «նկուղային հարկով երկհարկանի բնակելի տան, ավտոտնակի և զրուցարանի կառուցման» բառերը փոխարինել «մանսարդային հարկով երկհարկանի բնակելի տան, օժանդակ շինությունների և զրուցարանի կառուցման» բառերով:

2.Թույլատրել Գոհար Հրանտի Եղիազարյանին շարունակելու սեփականության իրավունքով իրեն պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի Ազատության փողոցի թիվ 29 հասցեի տնամերձ հողամասում 2019 թվականի հունիսի 18-ի թիվ 52 շինարարության թույլտվությամբ տրված մանսարդային հարկով երկհարկանի բնակելի տան, օժանդակ շինությունների և զրուցարանի կառուցման շինարարական աշխատանքները՝ համաձայն փոփոխված նախագծի և թույլտվության ժամկետը երկարացնել մինչև 2024 թվականի հունվարի 30-ը:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Գոհար Հրանտի Եղիազարյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2023 թ. հունվարի 30
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«30» հունվարի 2023 թվականի N 87-Ա

## ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Սամվել Աշոտի Ալթունյանի (ծնված՝ 1946 թվականի հուլիսի 1-ին) կողմից Ջրվեժի համայնքապետարանին հասցեագրված դիմումը, որով ցանկություն է հայտնել օրինականացնել սեփականության իրավունքով իրեն պատկանող Ջրվեժ համայնքի Ձովք գյուղի 13-րդ փողոցի թիվ 7 հասցեի տնամերձ հողամասում ինքնակամ կառուցված շինությունները (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 29112022-07-0178 վկայական, տրված 2022 թվականի նոյեմբերի 29-ին, անհատ ձեռնարկատեր Վալերիկ Գալստյանի կողմից 2023 թվականի հունվարի 17-ին կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագիծը, ինքնակամ կառույցը Կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հավաստող ծածկագիր՝ 2023QKGR5E, մուտքագրված 2023 թվականի հունվարի 19-ին):

Համաձայն համայնքի կադաստրային քարտեզի և անհատ ձեռնարկատեր Վալերիկ Գալստյանի կողմից կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագծի պարզվել է, որ Սամվել Աշոտի Ալթունյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ձովք գյուղի 13-րդ փողոցի թիվ 7 հասցեի տնամերձ հողամասում 2013 թվականին ինքնակամ կառուցվել է թիվ 1 հենապատը՝ ընդհանուր 9,8 քառ․մետր և թիվ 2 պարիսպը՝ 28,8 քառ․մետր արտաքին մակերեսներով:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 10, 11, 13-րդ կետերի պահանջներով և հաշվի առնելով այն, որ Սամվել Աշոտի Ալթունյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ձովք գյուղի 13-րդ փողոցի թիվ 7 հասցեի տնամերձ հողամասում ինքնակամ կառուցված շենք-շինությունների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ***որոշում եմ.***

1.Սամվել Աշոտի Ալթունյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ձովք գյուղի 13-րդ փողոցի թիվ 7 հասցեի տնամերձ հողամասում ինքնակամ կառուցված թիվ 1 հենապատը՝ ընդհանուր 9,8 քառ․մետր և թիվ 2 պարիսպը՝ 28,8 քառ․մետր արտաքին մակերեսներով, համարել օրինական:

2.Սահմանել, որ հողամասի սեփականատերը.

1)սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում Ջրվեժ համայնքի բյուջեի N 900105214218 հաշվին պետք է վճարի Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաշվարկված 28 001 (քսանութ հազար մեկ) Հայաստանի Հանրապետության դրամ օրինականացման վճարը.

2)իր միջոցների հաշվին պետք է վճարի կառույցի գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված վճարներն ու տուրքերը:

3.Սահմանել, որ սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում օրինականացման համար սահմանված վճարումը չկատարելու դեպքում նշված ինքնակամ կառույցները ենթակա չէ պետական գրանցման, իսկ սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:

4.Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել աշխատակազմի գլխավոր մասնագետ Վահե Սիրականյանի վրա:

5.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Սուսաննա Թադևոսյանը:

6.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Սամվել Աշոտի Ալթունյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2023 թ. հունվարի 30

գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«30» հունվարի 2023 թվականի N 86-Ա

## ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով, ***որոշում եմ.***

1.Արամ Ներսեսի Կարամանուկյանին տալ մեկ հարկանի տնեսական շինության կառուցման շինարարության թույլտվություն՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի 2-րդ թաղամասի թիվ 13 հասցեի հողամասում:

2.Կառուցվող շենքերի և շինությունների սպասարկման համար անհրաժեշտ ենթակառուցվածների իրականացումը կատարվում են բացառապես կառուցապատողի միջոցների հաշվին:

3.Պարտավորեցնել Արամ Ներսեսի Կարամանուկյանին շինարարական աշխատանքներն սկսելուց առնվազն երեք օր առաջ, տեղեկացնել համայնքի ղեկավարին, համաձայն N 2-5 ձևի:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Արամ Ներսեսի Կարամանուկյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2023 թ. հունվարի 30
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

«30» հունվարի 2023 թվականի N 85-Ա

## ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ԳՈՒՅՔԻ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել քաղաքացի Գոհար Արտավազդի Կլեկչյանի (ծնված՝ 1962 թվականի մարտի 9-ին) Ջրվեժի համայնքապետարանին հասցեագրված դիմումը, որով ցանկություն է հայտնել օրինականացնել սեփականության իրավունքով իրեն պատկանող Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի 7-րդ թաղամասի թիվ 3 հասցեի բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասում ինքնակամ կառուցված բնակելի տունը (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 25082022-07-0050 վկայական, տրված 2022 թվականի օգոստոսի 25-ին, «ԷԼՄԱ» ՍՊԸ-ի կողմից 2022 թվականի նոյեմբերի 11-ին կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագիծը, ինքնակամ կառույցը Կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հավաստող ծածկագիր՝ 20224Y76LR, մուտքագրված 2022 թվականի նոյեմբերի 21-ին):

Համաձայն համայնքի կադաստրային քարտեզի և «ԷԼՄԱ» ՍՊԸ-ի կողմից կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագծի պարզվել է, որ Գոհար Արտավազդի Կլեկչյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի 7-րդ թաղամասի թիվ 3 բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասում 2009 թվականին ինքնակամ կառուցվել է թիվ 1 բնակելի տունը՝ ընդհանուր 54,9 քառ. մետր արտաքին մակերեսով:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ և 62-րդ կետերի, 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշման 4-րդ կետի, նույն որոշմամբ հաստատված կարգի 10, 11, 13 կետերի պահանջներով և հաշվի առնելով այն, որ Գոհար Արտավազդի Կլեկչյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի 7-րդ թաղամասի թիվ 3 հասցեի տնամերձ հողամասում ինքնակամ կառուցված բնակելի տան պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, ինքնակամ բնակելի տունը կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ***որոշում եմ.***

1.Գոհար Արտավազդի Կլեկչյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի 7-րդ թաղամասի թիվ 3 հասցեիբնակավայրերի բնակելի կառուցապատման հողակտորը վերահասցեավորել՝ համայնք Ջրվեժ, գյուղ Ձորաղբյուր, 204-րդ թաղամաս, թիվ 26:

2.Գոհար Արտավազդի Կլեկչյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի 204-րդ թաղամասի թիվ 26 հասցեի բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասում 2009 թվականին ինքնակամ կառուցված թիվ 1 բնակելի տունը՝ ընդհանուր 54,9 քառ. մետր արտաքին մակերեսով, համարել օրինական:

3.Սահմանել, որ հողամասի սեփականատերը.

1)սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում Ջրվեժ համայնքի բյուջեի N 900105221213 հաշվին պետք է վճարի Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաշվարկված 127 149 (մեկ հարյուր քսանյոթ հազար մեկ հարյուր քառասունինը) Հայաստանի Հանրապետության դրամ օրինականացման վճարը.

2)իր միջոցների հաշվին պետք է վճարի կառույցի գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված վճարներն ու տուրքերը:

4.Սահմանել, որ սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում օրինականացման համար սահմանված վճարումը չկատարելու դեպքում նշված ինքնակամ կառույցը ենթակա չէ պետական գրանցման, իսկ սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:

5.Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել աշխատակազմի գլխավոր մասնագետ Վահե Սիրականյանի վրա:

6.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Սուսաննա Թադևոսյանը:

7.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Գոհար Արտավազդի Կլեկչյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2023 թ. հունվարի 30
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«30» հունվարի 2023 թվականի N 84-Ա

## ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ, 4-րդ և 5-րդ կետերի պահանջներով, որոշում եմ.

1. Թույլատրել անհատ ձեռնարկատեր Վլադիմիր Մելիքսեթյանին՝ Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի 1-ին թաղամասի թիվ 25/1 հասցեում 2023 թվականի ընթացքում զբաղվելու հանրային սննդի կազմակերպմամբ և իրացմամբ, ոգելից և ալկոհոլային խմիչքների արտադրատեսակների իրացմամբ և ժամը 24.00-ից հետո հանրային սննդի կազմակերպմամբ և իրացմամբ:

2. Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնին՝ հաստատված թույլտվությունները հայտատուին տրամադրել տեղական տուրքի վճարումը կատարելուց հետո՝ 3-օրյա ժամկետում:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անհատ ձեռնարկատեր Վլադիմիր Մելիքսեթյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2023 թ. հունվարի 30
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«30» հունվարի 2023 թվականի N 83-Ա

## ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50 և 53-րդ կետերի պահանջներով և հաշվի առնելով քաղաքացի Նելսոն Խաչիկի Հովհաննիսյանի լիազոր անձ Անժելա Ռաֆիկի Վարդանյանի խնդրանքը, ***որոշում եմ.***

1.Նելսոն Խաչիկի Հովհաննիսյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 8-րդ փողոցի թիվ 3 հասցեի բնակավայրերի բնակելի կառուցապատման հողակտորից բաժանված, կառուցապատված 374,9 քառ.մետր մակերեսով թիվ 1 հիմնական մասին տրամադրել հասցե՝ համայնք Ջրվեժ, գյուղ Ջրվեժ, 8-րդ փողոց, թիվ 3, թիվ 2 կառուցապատված առանձնացվող մասին՝ 87,5 քառ.մետր մակերեսով, տրամադրել հասցե՝ համայնք Ջրվեժ, գյուղ Ջրվեժ, Մելքոնյան փողոց, թիվ 82/1:

2.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում Նելսոն Խաչիկի Հովհաննիսյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2023 թ. հունվարի 30
գ. Ջրվեժ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
# ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«27» հունվարի 2023 թվականի N 82-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50 և 53-րդ կետերի պահանջներով և հաշվի առնելով քաղաքացի Ոսկեհատ Վազգենի Ոսկանյանի լիազոր անձ Ռուբեն Հնձարի Վարդերեսյանի խնդրանքը, որոշում եմ.

1.Ոսկեհատ Վազգենի Ոսկանյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 32-րդ փողոցի թիվ 12 հասցեի բնակավայրերի բնակելի կառուցապատման հողակտորից բաժանված 1500,0 քառ.մետր մակերեսով թիվ 1 հիմնական մասին տրամադրել հասցե՝ համայնք Ջրվեժ, գյուղ Ջրվեժ, 32-րդ փողոց, թիվ 12, թիվ 2 առանձնացվող մասին՝ 500,0 քառ.մետր մակերեսով, տրամադրել հասցե՝ համայնք Ջրվեժ, գյուղ Ջրվեժ, 33-րդ փողոց, թիվ 9:

2.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում Ոսկեհատ Վազգենի Ոսկանյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2023 թ. հունվարի 27
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«27» հունվարի 2023 թվականի N 81-Ա

## ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգի 124-րդ կետով, ***որոշում եմ.***

1.Թույլատրել Գեղամ Նորայրի Մինասյանին՝ շարունակելու սեփականության իրավունքով իրեն պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի այգեգործական զանգվածի 2-րդ թաղամասի թիվ 15 հասցեի տնամերձ հողամասում 2020 թվականի սեպտեմբերի 14-ի թիվ 149 շինարարության թույլտվությամբ տրված երկհարկանի բնակելի տան, լողավազանի կառուցման և պարսպապատման շինարարական աշխատանքները՝ համաձայն հաստատված նախագծի և թույլտվության ժամկետը երկարացնել մինչև 2024 թվականի հունվարի 27-ը:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Գեղամ Նորայրի Մինասյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2023 թ. հունվարի 27
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«27» հունվարի 2023 թվականի N 80-Ա

## ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմանբ հաստատված կարգի 50 և 53-րդ կետերի պահանջներով և հաշվի առնելով քաղաքացի Դավիթ Միերի Իշխանյանի լիազոր ներկայացուցիչ Արմեն Գերասիմի Գրիգորյանի խնդրանքը, ***որոշում եմ.***

1.Դավիթ Միերի Իշխանյանին սեփականության իրավունքով պատկանող մարզ Կոտայք, համայնք Ջրվեժ, գյուղ Ձորաղբյուր, Ազատության փողոց թիվ 4 հասցեի՝ 1200,0 քառ.մետր և մարզ Կոտայք, համայնք Ջրվեժ, գյուղ Ձորաղբյուր, Ազատության փողոց թիվ 6 հասցեի՝ 1200,0 քառ.մետր մակերեսներով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողակտորները միավորել և միավորված անշարժ գույքին տրամադրել հասցե՝ համայնք Ջրվեժ, գյուղ Ձորաղբյուր, Ազատության փողոց, թիվ 4-6:

2.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում՝ Դավիթ Միերի Իշխանյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2023 թ. հունվարի 27
գ. Ջրվեժ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
# ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«27» հունվարի 2023 թվականի N 79-Ա

### ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել քաղաքացիներ Զոյրիկ Սարիբեկի Գևորգյանի (ծնված՝ 1959 թվականի հունվարի 2-ին), Թամարա Փայլակի Միքայելյանի (ծնված՝ 1981 թվականի հունվարի 18-ին) և Գերասիմ Փայլակի Միքայելյանի (ծնված՝ 1986 թվականի փետրվարի 21-ին) Ջրվեժի համայնքապետարանին հասցեագրված դիմումը, որով ցանկություն են հայտնել օրինականացնել ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով իրենց պատկանող Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 13-րդ փողոցի թիվ 40 հասցեի բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասում ինքնակամ կառուցված շինությունները (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 03012023-07-0043 վկայական, տրված 2023 թվականի հունվարի 3-ին, «ՍԿԶԲՆԱԿԵՏ» ՍՊԸ-ի կողմից 2023 թվականի հունվարի 12-ին կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագիծը, ինքնակամ կառույցը Կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հավաստող ծածկագիր՝ 20239VYHQC, մուտքագրված 2023 թվականի հունվարի 13-ին):

Համաձայն համայնքի կադաստրային քարտեզի և «ՍԿԶԲՆԱԿԵՏ» ՍՊԸ-ի կողմից կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագծի պարզվել է, որ Զոյրիկ Սարիբեկի Գևորգյանին, Թամարա և Գերասիմ Փայլակի Միքայելյաններին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 13-րդ փողոցի թիվ 40 հասցեի բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասում 2007 թվականին ինքնակամ կառուցվել է թիվ 1 բնակելի տունը ընդհանուր՝ 354,08 քառ.մետր, թիվ 2 խորդանոցը՝ 2,8 քառ.մետր, թիվ 3 հավաբունը՝ 8,86 քառ.մետր և թիվ 4 պարիսպը՝ 4,41 քառ.մետր արտաքին մակերեսներով:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշման 4-րդ կետի, նույն որոշմամբ հաստատված կարգի 10, 11, 13-րդ կետերի պահանջներով և հաշվի առնելով այն, որ Զոյրիկ Սարիբեկի Գևորգյանին, Թամարա և Գերասիմ Փայլակի Միքայելյաններին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 13-րդ փողոցի թիվ 40 հասցեի տնամերձ հողամասում ինքնակամ կառուցված շինությունների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, ինքնակամ շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ***որոշում եմ.***

1.Զոյրիկ Սարիբեկի Գևորգյանին, Թամարա և Գերասիմ Փայլակի Միքայելյաններին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 13-րդ փողոցի թիվ 40 հասցեի բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասում 2007 թվականին ինքնակամ կառուցված թիվ 1 բնակելի տունը՝ ընդհանուր 354,08 քառ.մետր, թիվ 2 խորդանոցը՝ 2,8 քառ.մետր, թիվ 3 հավաբունը՝ 8,86 քառ.մետր և թիվ 4 պարիսպը՝ 4,41 քառ.մետր արտաքին մակերեսներով, համարել օրինական:

2.Սահմանել, որ հողամասի սեփականատերերը.

1)սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում Ջրվեժ համայնքի բյուջեի N 900105228218 հաշվին պետք է վճարեն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաշվարկված 991 143 (ինը հարյուր իննսունմեկ հազար մեկ հարյուր քառասուներեք) Հայաստանի Հանրապետության դրամ օրինականացման վճարը.

2)իրենց միջոցների հաշվին պետք է վճարեն կառույցի գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված վճարներն ու տուրքերը:

3.Սահմանել, որ սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում օրինականացման համար սահմանված վճարումը չկատարելու դեպքում նշված ինքնակամ կառույցը ենթակա չէ պետական գրանցման, իսկ սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:

4.Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել աշխատակազմի գլխավոր մասնագետ Վահե Սիրականյանի վրա:

5.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Սուսաննա Թադևոսյանը:

6.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Ջոյրիկ Սարիբեկի Գևորգյանին, Թամարա և Գերասիմ Փայլակի Միքայելյաններին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ — ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2023 թ. հունվարի 27
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«27» հունվարի 2023 թվականի N 78-Ա

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ կետի պահանջով, ***որոշում եմ.***

1. Թույլատրել անհատ ձեռնարկատեր Կարինե Հակոբյանին՝ Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 15-րդ փողոցի թիվ 5 հասցեում 2023 թվականի ընթացքում զբաղվելու ոգելից խմիչքների և ծխախոտի արտադրատեսակների վաճառքով:

2.Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնին՝ հաստատված թույլտվությունները հայտատուին տրամադրել տեղական տուրքի վճարումը կատարելուց հետո՝ 3-օրյա ժամկետում:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անհատ ձեռնարկատեր Կարինե Հակոբյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2023 թ. հունվարի 27
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«27» հունվարի 2023 թվականի N 77-Ա

## ՀՈՂԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Լաուրա Օնիկի Շահնազարյանի լիազոր ներկայացուցիչ Կարեն Վահանի Առաքելյանի Ջրվեժի համայնքապետարանին հասցեագրված դիմումը, որով ցանկություն է հայտնել սեփականության իրավունքով Լաուրա Շահնազարյանին պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի 07–042–0317–0093 կադաստրային համարի 7118.8 քառ.մետր մակերեսով գյուղատնտեսական նշանակության վարելահողից 1278,23 քառ.մետր մակերեսով հատվածի նպատակային նշանակությունը փոխադրելու բնակավայրի բնակելի կառուցապատման հողերի կատեգորիա՝ օրենսդրությամբ սահմանված կարգով բնակելի կառուցապատում իրականացնելու համար (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 28042022-07–0164, տրված 2022 թվականի ապրիլի 28-ին):

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետի, «Քաղաքաշինության մասին» օրենքի 143-րդ հոդվածի 12-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 25-րդ կետի, 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50 և 53-րդ կետերի, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքի 7-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 112-Ա որոշումը, ***որոշում եմ.***

1.Լաուրա Օնիկի Շահնազարյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի 07–042–0317–0093 կադաստրային համարի 7118.8 քառ.մետր մակերեսով գյուղատնտեսական նշանակության վարելահողից 1278,23 քառ.մետր մակերեսով հատվածի նպատակային նշանակությունը փոխադրել բնակավայրի բնակելի կառուցապատման հողերի կատեգորիա՝ օրենսդրությամբ սահմանված կարգով բնակելի կառուցապատման համար:

2.Լաուրա Օնիկի Շահնազարյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի 07–042–0317–0093 կադաստրային համարի 7118.8 քառ.մետր մակերեսով գյուղատնտեսական նշանակության վարելահողից 1278,23 քառ.մետր մակերեսով բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասին տրամադրել հասցե՝ համայնք Ջրվեժ, գյուղ Ձորաղբյուր, 5-րդ փողոց թիվ 23:

3.Առաջարկել Լաուրա Օնիկի Շահնազարյանին՝ Ջրվեժ համայնքի բյուջեի 900105221171 հաշվին վճարելու հողամասի նպատակային նշանակության փոփոխման պահին առկա կադաստրային արժեքների տարբերությունը՝ 5 627 792 (հինգ միլիոն վեց հարյուր քսանյոթ հազար հինգ հարյուր ութսունինինգ) Հայաստանի Հանրապետության դրամ:

4.Կառուցապատման հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀՇՆ 30-01-2014 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:

5.Կառուցվող շենքերի և շինությունների սպասարկման համար անհրաժեշտ ենթակառուցվածքների իրականացումը կատարվում են բացառապես կառուցապատողի միջոցների հաշվին:

6.Աշխատակազմի գլխավոր մասնագետ Հուսիկ Գրիգորյանին՝

1)իրականացնել հսկողություն սույն որոշման երրորդ կետի նկատմամբ,

2)սույն որոշման առաջին կետում նշված հողի նպատակային նշանակության փոփոխությունը պետական գրանցում ստանալուց հետո ընդգրկել համայնքի տարեկան, ընթացիկ հաշվառման և համայնքի հողային հաշվեկշռում:

7.Աշխատակազմի քարտուղարին՝ հողամասի նպատակային նշանակության կատարված փոփոխության մասին 10-օրյա ժամկետում տեղեկացնել քաղաքաշինության կոմիտե և անշարժ գույքի նկատմամբ իրավունքները գրանցող պետական մարմին:

8.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Լաուրա Օնիկի Շահնազարյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2023 թ. հունվարի 27
գ.Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«27» հունվարի 2023 թվականի N 76-Ա

## ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ջրվեժի համայնքապետարան է դիմել քաղաքացի Դերենիկ Հրանտի Դումանյանի (ծնված՝ 1953 թվականի հունվարի 1-ին) լիազոր ներկայացուցիչ Ալեքսան Ալբերտի Կարապետյանը՝ սեփականության իրավունքով Դերենիկ Դումանյանին պատկանող Ջրվեժ համայնքի Զորաղբյուր այգեգործական 3-րդ զանգված 3ա թաղամաս թիվ 16 հասցեում գտնվող հողամասից գլխավոր հատակագծում ընդհանուր օգտագործման ճանապարհի արտացոլված 229,63 քառ.մետր մակերեսով հատվածի նպատակային նշանակությունը բնակավայրերի բնակելի կառուցապատման հողերի կատեգորիա փոխելու խնդրանքով (հիմք՝ անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1074315 վկայական, տրված 2005 թվականի փետրվարի 7-ին):

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի, 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ և 62-րդ կետերի պահանջներով և հիմք ընդունելով Ջրվեժ համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 107-Ա որոշումը, ***որոշում եմ.***

1.Դերենիկ Հրանտի Դումանյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզի Զորաղբյուր այգեգործական 3-րդ զանգված 3ա թաղամաս թիվ 16 հասցեի գույքը վերահասցեավորել՝ համայնք Ջրվեժ, գյուղ Զորաղբյուր, 186-րդ թաղամաս, թիվ 23/1:

2.Քաղաքացի Դերենիկ Հրանտի Դումանյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Զորաղբյուր գյուղի 186-րդ թաղամասի թիվ 23/1 հասցեում գտնվող հողամասից գլխավոր հատակագծում սխալմամբ ընդհանուր օգտագործման ճանապարհի արտացոլված 229,63 քառ.մետր մակերեսով հատվածի նպատակային նշանակությունը փոխադրել բնակավայրերի բնակելի կառուցապատման հողերի կատեգորիա:

2.Աշխատակազմի գլխավոր մասնագետ Հուսիկ Գրիգորյանին՝ սույն որոշման առաջին կետում նշված գույքի նպատակային նշանակության փոփոխությունը պետական գրանցում ստանալուց հետո ընդգրկել համայնքի տարեկան, ընթացիկ հաշվառման և համայնքի հողային հաշվեկշռում:

3.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Սուսաննա Թադևոսյանը:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Դերենիկ Հրանտի Դումանյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2023 թ. հունվարի 27
գ.Ջրվեժ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«27» հունվարի 2023 թվականի N 75-Ա

## ՀՈՂԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Սերժիկ Կարլենի Պետրոսյանի լիազոր ներկայացուցիչ Աշոտ Ռոլանդի Հակոբյանի Ջրվեժի համայնքապետարանին հասցեագրված դիմումը, որով ցանկություն է հայտնել սեփականության իրավունքով Սերժիկ Պետրոսյանին պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի 07-042-0372-0022 կադաստրային համարի 927,7 քառ.մետր մակերեսով գյուղատնտեսական նշանակության վարելահողի նպատակային նշանակությունը փոխադրելու բնակավայրի բնակելի կառուցապատման հողերի կատեգորիա՝ օրենսդրությամբ սահմանված կարգով բնակելի կառուցապատում իրականացնելու համար (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 13072022-07-0186, տրված 2022 թվականի հուլիսի 13-ին):

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետի, «Քաղաքաշինության մասին» օրենքի 14$^3$-րդ հոդվածի 12-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 25-րդ կետի, 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50 և 53-րդ կետերի, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքի 7-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 108-Ա որոշումը, ***որոշում եմ.***

1.Սերժիկ Կարլենի Պետրոսյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի 07-042-0372-0022 կադաստրային համարի 927,7 քառ.մետր մակերեսով հողամասի նշանակությունը փոխադրել բնակավայրի բնակելի կառուցապատման հողերի կատեգորիա՝ օրենսդրությամբ սահմանված կարգով բնակելի կառուցապատման համար:

2.Սերժիկ Կարլենի Պետրոսյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի 07-042-0372-0022 կադաստրային համարի 927,7 քառ.մետր մակերեսով բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասին տրամադրել հասցե՝ համայնք Ջրվեժ, գյուղ Ձորաղբյուր, Լճափի փողոց փողոց, թիվ 2:

3.Առաջարկել Սերժիկ Կարլենի Պետրոսյանին՝ եռամսյա ժամկետում Ջրվեժ համայնքի բյուջեի 900105221171 հաշվին վճարելու հողամասի նպատակային նշանակության փոփոխման պահին առկա կադաստրային արժեքների տարբերությունը՝ 6 304 000 (վեց միլիոն երեք հարյուր չորս հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:

4.Կառուցապատման հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորաես ապահովելով՝ ՀՀՇՆ 30-01-2014 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:

5.Կառուցվող շենքերի և շինությունների սպասարկման համար անհրաժեշտ ենթակառուցվածների իրականացումը կատարվում են բացառապես կառուցապատողի միջոցների հաշվին:

6.Աշխատակազմի գլխավոր մասնագետ Հուսիկ Գրիգորյանին՝

1)իրականացնել հսկողություն սույն որոշման երրորդ կետի նկատմամբ,

2)սույն որոշման առաջին կետում նշված հողի նպատակային նշանակության փոփոխությունը պետական գրանցում ստանալուց հետո ընդգրկել համայնքի տարեկան, ընթացիկ հաշվառման և համայնքի հողային հաշվեկշռում:

7.Աշխատակազմի քարտուղարին՝ հողամասի նպատակային նշանակության կատարված փոփոխության մասին 10-օրյա ժամկետում տեղեկացնել քաղաքաշինության կոմիտե և անշարժ գույքի նկատմամբ իրավունքները գրանցող պետական մարմին:

8.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Սերժիկ Կարլենի Պետրոսյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2023 թ. հունվարի 27

գ.Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«27» հունվարի 2023 թվականի N 74-Ա

## ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգի 124-րդ կետով, ***որոշում եմ.***

1.Թույլատրել Հայկ Նարեկի Ամբարյանի ներկայացուցիչ Նարեկ Գուրգենի Ամբարյանին՝ շարունակելու սեփականության իրավունքով Հայկ Նարեկի Ամբարյանին պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 43-րդ փողոցի թիվ 11 հասցեի տնամերձ հողամասում 2019 թվականի սեպտեմբերի 20-ի թիվ 93 շինարարության թույլտվությամբ տրված նկուղային հարկով երկհարկանի բնակելի տան և պահակակետի կառուցման շինարարական աշխատանքները՝ համաձայն հաստատված նախագծի և թույլտվության ժամկետը երկարացնել մինչև 2024 թվականի հունվարի 27-ը:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Հայկ Նարեկի Ամբարյանի ներկայացուցիչ Նարեկ Գուրգենի Ամբարյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2023 թ. հունվարի 27
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«27» հունվարի 2023 թվականի N 73-Ա

## ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 22-Ի ԹԻՎ 442-Ա ԵՎ ՕԳՈՍՏՈՍԻ 12-Ի ԹԻՎ 492-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ԵՎ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ և 34-րդ հոդվածի 1-ին մասերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգի 108-րդ և 124-րդ կետերով և հաշվի առնելով քաղաքացի Հայկ Նարեկի Ամբարյանի ներկայացուցիչ Նարեկ Գուրգենի Ամբարյանի խնդրանքը, ***որոշում եմ.***

1.Համայնքի ղեկավարի 2019 թվականի հուլիսի 22-ի «Ճարտարապետահատակագծային առաջադրանք տալու մասին» թիվ 442-Ա և 2019 թվականի օգոստոսի 12-ի «Շինարարության թույլտվություն տալու մասին» թիվ 492-Ա որոշումներում կատարել հետևյալ փոփոխությունը.

1) որոշումների 1-ին կետերում «և շան կացարանի» բառերը փոխարինել «,շան կացարանի և լողավազանի» բառերով:

2.Թույլատրել Հայկ Նարեկի Ամբարյանի ներկայացուցիչ Նարեկ Գուրգենի Ամբարյանին՝ շարունակելու սեփականության իրավունքով Հայկ Նարեկի Ամբարյանին պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 43-րդ փողոցի թիվ 13 հասցեի տնամերձ հողամասում 2019 թվականի օգոստոսի 12-ի թիվ 79 շինարարության թույլտվությամբ տրված ավտոտնակի, տաղավարի, կաթսայատուն-խորդանոցի, շան կացարանի և լողավազանի կառուցման աշխատանքները՝ համաձայն փոփոխված նախագծի և թույլտվության ժամկետը երկարաձգել մինչև 2024 թվականի հունվարի 27-ը:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Հայկ Նարեկի Ամբարյանի ներկայացուցիչ Նարեկ Գուրգենի Ամբարյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2023 թ. հունվարի 27
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«27» հունվարի 2023 թվականի N 72-Ա

## ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 8-Ի ԹԻՎ 173-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ և 34-րդ հոդվածի 1-ին մասերով, ***որոշում եմ.***

1. Համայնքի ղեկավարի 2020 թվականի ապրիլի 8-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անձնագրերը հաստատելու և համայնքի ղեկավարի 2017 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 271-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 173-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշմամբ հաստատված թիվ 1 հավելվածը լրացնել 55-րդ ենթակետով, թիվ 2 հավելվածը՝ 31-րդ ենթակետով՝

«55)որպես հակակոռուպցիոն ծրագրերի պատասխանատու՝»,

«31)որպես հակակոռուպցիոն ծրագրերի պատասխանատու՝»,

2) որոշմամբ հաստատված թիվ 1 հավելվածի 55-րդ և թիվ 2 հավելվածի 31-րդ ենթակետերը լրացնել հետևյալ բովանդակությամբ «ա., բ., գ., դ.» պարբերություններով՝

«ա.պարտավոր է իր իրավասության շրջանակներում համագործակցել իրավասու մարմինների հետ, ապահովել ռազմավարական փաստաթղթերով նախատեսված հակակոռուպցիոն ոլորտի միջոցառումների իրականացումը, հաշվետվությունների տրամադրումը, ինքնագնահատման զեկույցների կազմումը, հարցաշարերի լրացումը, մասնակցությունը հակակոռուպցիոն ոլորտին առնչվող քննարկումներին.

բ.պարտավոր է տրամադրել համապատասխան մարմնի գործառույթներին առնչվող ռազմավարական փաստաթղթերով նախատեսված՝ հակակոռուպցիոն ոլորտի միջոցառումների և ոլորտային միջազգային պարտավորությունների կատարման վերաբերյալ տեղեկատվություն, պարզաբանումներ, միջոցներ ձեռնարկել համապատասխան մարմնի կողմից ոլորտային միջազգային պարտավորությունների կատարումն ապահովել ուղղությամբ.

գ.իրավունք ունի համապատասխան պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կողմից իրականացվող հակակոռուպցիոն ծրագրերի շրջանակներում տվյալ մարմնի ստորաբաժանումներից պահանջելու և ստանալու տեղեկատվություն.

դ.իրավունք ունի հակակոռուպցիոն քաղաքականության և մոնիտորինգի համար պատասխանատու մարմնից պահանջելու և ստանալու մեթոդական աջակցություն, խորհրդատվություն ռազմավարական փաստաթղթերով նախատեսված հակակոռուպցիոն ոլորտի միջոցառումների և ոլորտային միջազգային պարտավորությունների վերաբերյալ:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2023 թ. հունվարի 27
գ.Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

«27» հունվարի 2023 թվականի N 71-Ա

## ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով, ***որոշում եմ.***

1.Հռիփսիմե Վրեժի Կարապետյանին տալ նկուղային հարկով երկհարկանի բնակելի տան կառուցման շինարարության թույլտվություն՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի Բեստլենդ թաղամասի թիվ 4/1 հասցեի հողամասում:

2.Կառուցվող շենքերի և շինությունների սպասարկման համար անհրաժեշտ ենթակառուցվածների իրականացումը կատարվում են բացառապես կառուցապատողի միջոցների հաշվին:

3.Պարտավորեցնել Հռիփսիմե Վրեժի Կարապետյանին շինարարական աշխատանքներն սկսելուց առնվազն երեք օր առաջ, տեղեկացնել համայնքի ղեկավարին, համաձայն N 2-5 ձևի:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Հռիփսիմե Վրեժի Կարապետյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2023 թ. հունվարի 27
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«27» հունվարի 2023 թվականի N 70-Ա

## ՀԱՍՏԱՏՎԱԾ ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգի 108-րդ և 124-րդ կետերով և հաշվի առնելով քաղաքացի Սուրեն Հրաչիկի Մինասյանի խնդրանքը, ***որոշում եմ.***

1.Թույլատրել Սուրեն Հրաչիկի Մինասյանին շարունակելու սեփականության իրավունքով իրեն պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 40-րդ փողոցի թիվ 35 հասցեի հողամասում 2020 թվականի սեպտեմբերի 4-ի թիվ 141 շինարարության թույլտվությամբ տրված երկհարկանի բնակելի տան, ավտոտնակի, լողավազանի, օժանդակ շինության կառուցման և պարսպապատման շինարարական աշխատանքները՝ համաձայն փոփոխված նախագծի և թույլտվության ժամկետը երկարաձգել մինչև 2023 թվականի ապրիլի 27-ը:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Սուրեն Հրաչիկի Մինասյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2023 թ. հունվարի 27
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«27» հունվարի 2023 թվականի N 69-Ա

## ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով, ***որոշում եմ.***

1.Ավետիք և Գարիկ Պետրոսյաններին տալ երկհարկանի հարկանի բնակելի տան կառուցման շինարարության թույլտվություն՝ ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով իրենց պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 3-րդ թաղամասի թիվ 2/49 հասցեի հողամասում:

2.Կառուցվող շենքերի և շինությունների սպասարկման համար անհրաժեշտ ենթակառուցվածների իրականացումը կատարվում են բացառապես կառուցապատողի միջոցների հաշվին:

3.Պարտավորեցնել Ավետիք և Գարիկ Պետրոսյաններին շինարարական աշխատանքներն սկսելուց առնվազն երեք օր առաջ, տեղեկացնել համայնքի ղեկավարին, համաձայն N 2-5 ձևի:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Ավետիք և Գարիկ Պետրոսյաններին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2023 թ. հունվարի 27
գ. Ջրվեժ